աշխատանքները, լքում այն վայրերը, որոնք նրա ծնունդն են տեսել: Ուզում է երկիրը քանդակել ըստ իր երազի: Գաղափարներ է ստեղծում, իրագործում է:

Տիրող դիտութիւնը բնական դիտութիւնն է: Նա զննում է իրերը, կշռում, չափում, շոշափում, որոնում է մեծութիւնների, ծանրութիւնների եւ երկրաչափական յօրինուածքների արժէքները: Այդ դիտութիւնը կանգ է առնում իրերի մակերեսի վրայ, նիւթի ձեւաւորումների, ֆիզիքական երեւոյթների ենթադրեալ անշարժութեան եւ օրգանական փոփոխութիւնների վրայ: Նա դրական է եւ փորձնական:

Եւրոպացու գլխաւոր մտահոգութիւնը կեանքի նիւթական կազմակերպութիւնն է հանդիսանում: Դրամի չափազանցութիւնը եւ պահանջների չափազանցութիւնը մղում են նրան ընկերային տնտեսականութեան: Գիւղերի եւ քաղաքների նիւթական հիմքերը անդադար փոփոխութեան են ենթարկւում:

Եւրոպան բնականաբար ենթարկուած է ժառանգական ազդեցութիւնների: Դժուար է բնորոշել այդ ազդեցութիւնները. սակայն, մօտաւորապէս կարելի է ասել, որ Յունաստանը կանոնաւորել է նրա իմացականութիւնը, Հռոմը կազմակերպել է երկիրը եւ քրիստոնէութիւնը հնարաւորութիւն է տուել անհատական գիւտերը ի սպաս դնել համաշխարհային կեանքին:

Այդ ամէնը տեղի է ունեցել պատմական եւ ընկերային փոփոխութիւնների ընթացքին, դարբնուել է երկրորդական ազդակների մըրճահարման տակ, անհատների կամքի դէմ ու նրանց օժանդակութեամբ, կամաց-կամաց, ճակատագրականօրէն: Այսօր, այդ խառնուրդը, զանազան մետաղների այդ հալումը այլեւս տեղի է ունեցած, եւ եւրոպական մտայնութիւնը ներկայանում է աշխարհին իբրեւ տիրական, գործող մի ուժ, որը անկարելի է անտեսել:

* * *

Ամերիկան ընդօրինակել է Եւրոպան, ինչպէս ժամանակին Հռոմը ընդօրինակում էր Հելլադան:

Այստեղ ամէն ինչ մեծդիանում է, սրւում, ձգտում դէպի փարթամը: Հսկայ այդ հնոցի մէջ՝ տեսութիւնները, երեւակայութիւնները, դրութիւնները, ցեղերը եւ կրօնքները ենթարկուած են ելեքտր. մեծ հոսանքներին, ծեծուած ջղային եւ բուռն գործունէութեան դարբնոցների մէջ, փոփոխուած ահաւոր մեքենաների գործնական փնտռումների ընթացքին: Բօրսան կանոնաւորում է ամենօրեայ կեանքը: Մեքենական ինքնաշարժութիւնը կը-լանում է ոգին: Խորանարդ եւ անկիւնաւոր ձեւերը խմորում են հոգին ըստ հսկայ նաւամատոյցների, կաւախառն ճանապարհների եւ երկրաչափական քաղաքների պատկերին:

Այստեղ Եւրոպան դալարում է իր բազուկները, արտացոլում կուռ հայելիների մէջ եւ ցաւագին ծամածռութիւններ անում: Հեռաւոր Փարիզը սողում է, մէջքը ծռում, բաժանւում եւ Լոնդրան վազում է ճերմակ երկաթի գծերի վրայ, մանկական խաղալիքի նըման: Մարդիկ աշխատում են ըստ մեքենաների տրոփումին: Նրանց սիրտը եւ ուղեղը լարուած են ժամացոյցների նման. նրանց ձեռքերը հետեւում են յօդաւոր սռնակներին, իջեցրած շրջանակներին եւ ծայրամէտ գծերին: Մարդը մաս է կազմում հսկայ մեքենայութեան, որ սահում է ողորկ մակերեսների վրայ, զանդաղում լուսարձակ նշանների առջեւ. դղրդալով շարժւում եւ կանգ առնում կուրօրէն՝ պողպատէ յայտնութիւնից դուրս նետուած անյայտի առջեւ:

Օդատակարութի՛ւն:

Գերագոյն եւ ամբողջական օրէնք, ճարտարապետների կանոն, ընկերային խենթութեան ընկեցում, քարէ հաց՝ պողպատէ ակռաների տակ ճզմուած: Օդատակարութի՛ւն:

Ծերացած, նախանձոտ Եւրոպան սարսափով նայում է, թեւերը բաց անում սաւառնակների առջեւ, բանակցում, պարան նետում իր թանգարաններում կանգնած նաւերին, փոփոխում, այլակերպւում, եղունգները սրում, աշխատում ծօտենալ այդ նոր աշխարհին, որ դուրս է նետել իր ուղեղից, տատանւում, երերում եւ սրտմտում է:

Երկու այդ աշխարհները կիրառում են նոյն սկզբունքները:

Նոյնանման մտայնութիւններ: Թանձրաքարտէ տուներ եւ թղթի վրայ նկարուած պար-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան